ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«07» հունվարի 2025թ. N 11-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1587-Ն որոշման հավելվածի 17-րդ կետի 9-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով 2024 թվականի դեկտեմբերի 20-ին կայացած Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր փոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության մրցութային հանձնաժողովի գնահատման ամփոփ-թերթիկը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության 2024 թվականի դեկտեմբերի 20-ին կայացած մրցույթի արդյունքները՝ ըստ գնահատման ամփոփ-թերթիկի:

2. «Երևան-Թեհրան» միջպետական երթուղու սպասարկման համար 57,5 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Երկու Ընկեր» ՍՊ ընկերությանը՝ «Սետրա» մակնիշի 333 XX 62, 333 CC 62 և 333 QQ 62 հաշվառման համարանիշների տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երկու տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 16000 դրամ փոխադրավարձով:

3. Ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետին՝ ապահովել հաղթող կազմակերպության մրցույթի արդյունքների վերաբերյալ իրազեկումը:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին:

1/7/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք.Երևան

Ձև № 7

Հավելված

ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարի

<< >> _____ 2024թ.

N _____ հրամանի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ-ԹԵՐԹԻԿ

20 դեկտեմբերի 2024թ

(մրցույթի անցկացման օրը)

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	***Գումարային գնահատականը***			
	ներկայացված ավտոբուսների	վարորդների աշխատանքային փորձի	խախտումների առկայության	ընդամենը
«Երկու Ընկեր» ՍՊԸ	***«Երևան-Թեհրան»***			
	30	7.5	20	57,5

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

_____ (ստորագրությունը)

_____ (անունը, ազգանունը)